

ՀՆԴԱՆԱՅ ԳԱՂԹՈՋԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ
(ՆՈՐԱՏԱՅԱՎԱԾ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ)

ԱՄՅՈՒՆ զարի երկրորդ կեսին հայ հասարակական գործիչները Հայաստանի ազատագրման և անկախության վերականգնման գործում կարևոր տեղ էին հատկացնում Վրաստանին, լուրջ հույսեր կապում այնտեղից ստացվելիք օժանդակության և օգնության հետ և, ըստ այդմ էլ, փորձում էին ամեն զնով օժանդակել Վրաստանի տնտեսական ու քաղաքական հզորացմանը: ԱՄՅՈՒՆ զարի վերջին քառորդին հայ ազատագրական շարժմանը նպաստավոր լինելու համար որոշակի ջանքեր էին գործադրվում Հնդկաստանի հայ գաղթականներում, որտեղ առավել ծրագրավորված ու նպատակաուղաց էր գործում Շահամիր Շահամիրյանի ղեկավարած Մադրասի խումբը, որը կապեր էր հաստատել ոչ միայն Արցախի ու Վրաստանի, այլ նաև ռուսահայ կենտրոնների և, առաջին հերթին, Լազարյանների ու Հ. Արզումանյանի հետ: Ե. Շահամիրյանը Հնդկաստանում նախկին տպարանի հիմնադրումով ու մի շարք հրապարակախոսական գրքերի լույս, ընծայմամբ փորձում էր ոգեկոչել հայ ժողովրդին ապստամբելու օտար տիրապետության լուծը թոթափելու համար: Ավելին, երկրի ճակատագրին իր առավել գործուն մասնակցությունը բերելու նպատակով ինքը ևս ցանկություն էր հայտնել տեղափոխվել հայրենիք: Այդ ցանկություններին ընդառնելով ու վրաց իշխանի տիտղոս շնորհելով Ե. Շահամիրյանին, Հերակլ II-ը նրան էր նվիրել նաև այդ ժամանակ Վրաստանի իրավասության ներքո գտնվող հայկական լոռի Հերկումասո (1790 թ. նոյեմբերի 30): Ե. Շահամիրյանը նվերների ձևով օժանդակություն էր ցուցաբերում ոչ միայն Հերակլ II-ին, այլև նրա արքունիքի հայազգի իշխանավորներին՝ ցանկանալով միաժամանակ նրանց դրականապես տրամադրել իր ծրագրերի նկատմամբ: Այդ առումով մեծ հետաքրքրություն են ներկայացնում Շահամիրյանի՝ Մանուկար Թումանյանին գրած և յուրուր հրատարակվող նամակները, որոնք բնագրերով պահվում են Մաշտոցի անվան Մատենադարանի արխիվային բաժնի: Կյուրեղ Սրապյանի հավաքածուի մեջ, նամակներից երկրորդի վրացերեն թարգմանությունը հայերեն մականգրությամբ ծրարի մեջ հայտնաբերելով վրաց. ՍՍՀ ԳԱ Զեռագրերի ինստիտուտի արխիվային բաժնում և ըստ այդմ էլ ենթադրելով հայերեն բնագրի կորած լինելու հավանականությունը, վրացերեն խրթին թարգմանությունից հայերենի էինք թարգմանել և հրատարակել: Այժմ, հայտնաբերելով նամակի ինքնագիրը և նկատի ունենալով նրա հույժ կարևորությունը վրաց արքունիքի և Ե. Շահամիրյանի կապերի պատմության ուսումնասիրությունում, հարկ ենք համարում այն ևս զետեղել ստորև:

Ե. Շահամիրյանի և նրա տոհմի Վրաստանում ունենալիք իրավունքների ու պարտավորությունների ճշգրտման նպատակով Հերակլ II-ը 1797 թ. նոյեմբերի 20-ին Հնդկաստան է առաքում մի նոր հրովարտակ: Նման հրովարտակի անհրաժեշտությունը թելադրված էր, հավանաբար, այն տարակուսանքներով, որ արտահայտում էր Ե. Շահամիրյանը Մանուկար Թումանյանին գրած և ստորև հրատարակվող նամակի մեջ: Այդ վավերագրի վրացերեն ինքնագիրը լոնդոնում ձեռք է բերել լոնդոնարնակ Վրեժ Ներսիսյանը և նվիրել Մաշտոցի անվ. Մատենադարանին: Ստորև հրատարակվում է վավերագրի մեր կողմից կատարված հայերեն թարգմանությունը: Ուշագրավ է, որ Ե. Շահամիրյանի մահվան (1797 թ. հունիսի 13) լուրը Վրաստանում դեռևս հայտնի չէր դարձել և 1797 թ. նոյեմբերի 20-ի հրովարտակը տրվել է նրա անունով:

Հերակլ II-ի մահվանից հետո Վրաստանում գահ բարձրացած Գեորգի XII-ը իր 1799 թ. հոկտեմբերի 23-ի նամակով ցավակցություն է հայտնում Ե. Շահամիրյանի մահվան կապակցությամբ և նրա որդուն՝ Հովհաննես Շահամիրյանին, հրավիրում Վրաստան: Արժեքավոր է նաև Ե. Շահամիրյանի որդու՝ Հովհաննեսի և թոռան՝ Նաղարի 1806 թ. հունիսի 30-ի հրապարակվող նամակը ուղղված Վրաստանի կառավարչին, որտեղ նրանք խնդրում են պաշտպանել իրենց իրավունքը այդ քաղաքի նկատմամբ և հրամայել ճալժմէն երթալ և հաստատել զաղխս մեր և զկարասիս (եթէ տէր կամիցի) ի քաղաքին Լոռու ընտանեօք և որդովք մերովք, լինելով քաղաքն

Ի Տե՛ս Պ. Զ ո ր ա ն յ ա ն. Վրացական ուղեգրությունները և նրանց տեղեկությունները հայերի մասին. Երևան, 1981, էջ 163—165:

այն մասամբ իմիջ մեր երկիր մայրենի յաշխարհին Հայաստանի, որ այժմ գտանի ընդ Բարեխնամ կառավարութեան ձերումդ գերազանցութեան: Ինչպես հայտնի է, Գեորգի XII-ը ժամանակավոր օգտագործման պայմանով (մինչև Շահամիրյանի ժառանգների գալը) իր 1800 թ. փետրվարի 29-ի հրովարտակով Լոռին տրամադրել էր մելիք Ջիմշիդին, որն էլ այն հետագայում վաճառում է ցարական կառավարությանը: Գործարքն ի կատար էր ածվել, քանզի ֆինանսների մինիստրը դեռևս 1805 թ. մայիսի 22-ի գրությամբ հիմնավորել էր այն հետևյալ ձևով. «так как ни сын, ни внук Шамыр-агн... со времени присоединения Грузии... до ныне не являлись и присяги на подданство не učinили, да и в живых-ли они находятся—никогого отъезда от них нет... [то] на продаваемую мсликом Джимшидом грузинскому горному начальству землю купчую крепость совершить»².

Պ. Ա. ՉՈՐԱՆՅԱՆ

№ 1

Շահամիր Շահամիրյանի նամակը մանուշար Թումանյանին

Պայծառագոյն տեսոն Մանուշար Գորջասպի Թումանեան

ի Քիֆլիդ:

Բազմիցս եղև մերոց զանազան թուալ գրեցեալքն առ ձեզ յատկապես ձերոց առ մեզ Կարապետ վաճառականովն գրածին պատասխանքն, որ հաւատամ, զի յառաջ քան զայսօր մերոց գրածանոց առաջինն ժամանէլ լինի առ ի սպաս բարեկամիդ իմոյ և այժմ խրախճանութեամբ ծրարեցի ի սմա ոսիդն ի վեր յիշեցեալ Կարապետ Գասպարեանին¹, որում ցուցանէ, զի 20 թան զանազան ճոթանք հանձնել ամ Կարապետ Գասպարեանին, որոց վերա գրեցեալ համբաւատր անունն քոյ, որ մերոց ծախուքն Քիֆլիդ հանձնէ քեզ: Ցանկամ, զի սիրով ընկալցիս, համարելով իբրև զնշան սիրոյ բարեկամի քոյ և զպակասութիւնն մեզ ներեսցես:

Նոր մին այլ լուր չունիմ քեզ տալէ, թէ ոչ կալով սպասիմ ի ձէնջ ընթեռնում մերոց բազմիցս գրեցելոց պատասխանքն և ցանկամ, զի դուք էն աջողութիւնն լինէք գտել, որ իմ ցանկացած բանքն բարեպէս կատար լինէք հասուցել և այլն:

Յաւել քան զայս ցանկամ քեզ երկար կեանս, և աջողութիւն ընդ ամենայն գործս բարիս, եթէ իմ լէվ բարեկամ Սուլիսան Դիվանն Ռուստինցն² եկել լինի, յինէն ողջունես նմա և ասես, ցանկամ, զի եթէ ունիցի լուր ինչ վասն բարութեան աշխարհին ձերոյ, որ կարէ ուրախ առնել սիրտն մեր՝ շնորհ առ մեզ ունելով իւր առողջութեան լրին դրեսցէ մեզ, շնորհակալ կը լինեմ:

Մաղրասումն յունվարի ամսոյ... 19 Հրամանոց խոնարհս

Հաւաստի բարեկամ

Յամի տեսոն փրկին մերոյ 1793 Շամիր աղայ

Նաշտոցի անվ. Մատենադարան. (ՄՄ), արխիվ Կյուրեղ Սրասյանի, թղթ. ՏԻա, վավ. 7:

№ 2

Շահամիր Շահամիրյանի նամակը Մանուշար Թումանյանին

Պայծառագոյն տեսոն Մանուշար Գորջասպի Թումանեան

ի Քիֆլիդ

Չերոց երիս պատուելեացդ սեպտեմբերի ամսի 24 յամի տեսոն 1794 Խուէն առ մեզ գրեցելոյ պատասխանն ի յանուն ձերոց երիս պատուելեաց գրել ամ, այլ ինձ ախորժ է գրել քեզ՝ յատուկ անձնատրութեանն քոյ, նախ հաս-

² Кавказская старина, год. 1, № 2, Тифлис, 1872, с. 37.

տատելույ յատկապէս սէրն իմ, որ առ քեզ և ապա ձգելով ի միտս խոհեմ բարեկամիդ իմոյ սառն սրտով յետեւիլն գործին իմոյ՝ որ ի Թիփլիզ, ոչ ձեռքառնութեամբ զգլխեցուցանելով ունին բարեկամիդ իմոյ բայց ի մի վկայութեամբ։ Այսինքն՝ ի թուին սեպտեմբերի 24 ինձ գրեցիք, թէ յայսմ ժամանակի լուսափայլ Գիօրկինն³ ի Քսեղէն յետս դառնալէն յետ ընծայելոց էք նմայ իմոյս առնա գրեցեալն և խոսելոց էք ընդ նմայ յինէն ի նմանէ խնդրեցեալն և ապա պատասխանելոյ ինձ և նոյն ձերոց գրեցեալն է ի ձեռագիրն տէր Դաւթի⁴ ձերոց 3 անձանց ձեռամբ իւրաքանչիւր անուն ձեռնադրեալ, պատասխան նորին թէպէտ ձեզ գրեցի, ուրեմն պարտ է ինձ յամբերութեամբ սպասիլ վասն բանիդ ձերոյ պատճախանոյ, այլ յատկապէս բարեկամութիւնն իմ, որ առ քեզ, տա համարձակութիւն ինձ ասել։ Ահա ես ունիմ ի ձեռին իմ նմանին լուսափայլ Գիօրգի ժառանգ թագաւորին մի և նոյն թուին սեպտեմբերի 24 թիւն 1794 էն գրեցեալ ի Թիփլիսու ձեռաց գրովն տէր Դաւթի և ձեռնադրեալ և նոյն լուսափայլութենէ, որում պատմի ասելով՝ նա ստացեալ յինէն գրեցեալ թուլութեն իմ և ուրախ ելեալ ի վերայ գրեցելոյ իմոյ և պատասխան նորին ի տէր Դաւթի բարեկամէ իմէ լիցեմ։ Եւ ես ունեմ ի ձեռին իմոյ թուլթն տէր Դաւթի ի նոյն սեպտեմբերի 24 և յամի 1794 թվէն, ի տեղի որոք պատճախանադրութեան նոյնոյ լուսափայլութեան ինձ յրաւիդ օգնականութիւն ի վերայ գործոյն հանգուցեալ նազար Բէրօին։ Սովաւ երկայնամիտ լէր և խնայեալ մեզ ի այտքայն տգէտ համարելոյ և ցանկելոյ աւազ ի յաշս մեր, մի լինիցի այտպէս բարեկամ, և գործդ այդ ոչ համեմատի գործոյ պատուականութեանն ձերոյ։ քանզի աղտեղի է և բոլորովին ընդդէմ մաքուր պատուոյ ձերոյ։

Եւ արդ յայտնեմ քեզ, որ ես գրեցի ձեր երիս անձանց համապատճախանաց իմոց և նոցին արքայական բարձրութեանն և լուսափայլ ժառանգին և այլ բազմաց ամրաշինակեալ կնքեալ ի յանուն իւրաքանչ տերանց իմոց և բոլոր ասացեալ գրեանքն փակեալ ի մէջ մի փաթեթս և նոյն փաթեթն գործագրեալ ի յանուն ձեր, այսինքն՝ մէլիք Աւետիկ և քոյ և տէր Դաւթի և նոյն փաթեթն յանդերձ էս գրովն և յատուկ առ տէր Դաւթին գրածովս երիս օրինակօք կրկին ամրափակեցի և կնքեցի և նշանաւորեցի միանակ ի յանուն տէր Դաւթի և ի աններկայութենէ նորին մէլիք Աւետիկ և քեզ, ասացեալ երիս փաթեթն մինն հանձնելոց եմ Գանչեցի Աբրահամ որդւոյ Մուրադի մէլիք Ապավէն առաքեալ առն, երկուսն Բուսրայու վերայ տալոց եմ Բասրայ իմ յամայ պատճախանք պարոնաց Յովհաննէս Բէթխահէմ և Վարդան Մարգիս, որ մինն ի նոցանէ երկու փայեակաւ և մինն անցաւոր արամբ յուղարկէ ձեզ ի Թիփլիզ։

Եւ արդ, խնդրէմ ի քէն՝ որպէս հարկեցեալ, և պատուիրեմ քեզ՝ որպէս բարեկամ, զի շնորհ ընդ յիս ունելով բառցցես աղտեղի քողաւորութիւնն ի միջէ բարեպէս բարեկամութեան մերոյ գտանելն ձեր, որ մինն մերոց ի վեր յիշեցեալ փաթեթանոց բացէք ի միջի ձեր բոլորեցունցդ, եթէ տերամբ ողորմութեամբ կենդանի լինէք և կամք ձեր լինի պահել յամապատասխանութիւնն մեր, կամ որ ոք ի ձենջ մինչև որ մինտ, որ ունիցէք շնորհ առ իս, ըստ համեմատութեան գրեցելոյ մերոյ գրեանքն մեր հանձնեցէք իւրաքանչ տերանց և մերոց կողմանէ ազատապէս խնդրեցէք ի նորին արքայ[ա]կան բարձրութենէ և նորին ժառանգորդ լուսափայլ Գիօրգինէ, զոր ինչ պատվիրեցի ձեզ, և ի բար[ձր]ութենէ նոցին լուսափայլութեանէ զոր ինչ ստանայցէք բանիւ գործով պատասխան թէ բանիւ բերանով եւ թէ գրեցելօք մերոց փառակովն յանդերձ ձերոց առ մեզ գրեցելօքն յուղարկեցէք Բասրայ իմոյս ի վեր յիշեցեալ յամայպատասխանաց, զի նոքայ փութով առաքեսցեն մեզ։ Փոխանակ այսքայն շնորհաց քոց լինելոց եմ ի քէն գոհ և շնորհակալ։

Յաւել քան զայս գրեցի տէր Դաւթին՝ բարեկամին մերոյ, յուսամ զի դուք ունիցիք սիրելութիւն ընդ միմեանց, զի նա պատմեսցէ քեզ։ Թէպէտ խոշոր (այլ։

ունելով իրատեսն դրելոյ) գրուացքն իմ և ակն ունիմ ի ձեռն, զի կալով մնասցուք դուք ի վերայ խոստմանց ձերոց, որ առ մեզ, և արասցուք սովորութիւն ձեզ դրել մեզ մերոց որոք թուէն գրեանքն ի ձեռս ձեր հասանիլն:

Ի Մադրաս նոյեմբերի 30

Յրամանոց խոնարհ և հաւաստի
բարեկամ

յամի տեւուն փրկչին մերոյ 1795

Շամիր աղա

ՄՄ, արխիվ Կյուրեղ Սրապյանի, թղթ. 81ա, վավ. 9, թերթ՝ 2, բնագիր:

№ 3

Հերակլ II-ի հրովարտակր Ն. Շահամիրյանին

Ողորմությամբ աստուծոյ մենք Յեսեյան, Դավիթեան, Սողոմոնեան, Բագրատունեան երանելի Թեյմուրազ թագավորի որդի Հերակլ Երկրորդ, թագավոր Քարթլիի, Կախեթի և այլոց և այլոց, վերանորոգեցինք նորին պայծառափայլութիւն մեր որդի և մեր թագավորութեան գահաժառանգ Դիորգիի շնորհատվութեանը, որ կատարել էր նա նորջուլայեցի իշխան Շահ[ա]միր Սուլթանումին, այն է՝ իր սեփական տիրույթ լոռե քաղաքն իր ողջ ձորահովիտներով. որ է Գուգարաց աշխարհ, ստորագրված և կնքված իր հրովարտակով մարմնանալու բանին աստուծոյ 1790 թվականի նոյեմբեր ամսի 16-ին: Մենք, այնուհետև, ի հավելումն հաստատեցինք, որ այն լոռե քաղաքը լինի ոչ միայն տեր Շահամիր Սուլթանումի տիրույթը, այլև [որպես այդպիսին] մնալով անցնի նրան ժառանգաբար՝ սերնդից սերունդ, մինչև ավարտն աշխարհի: Վերացրինք ուստի ամեն տեսակի հարկ, մաքս ու հատուցումն արքունական և թե իշխանական ու ընդհանրապես հարկատու ժողովրդի և այլն, որպեսզի ոչ ոք իրավասու չլինի վերցնելու լոռե քաղաքի և ոչ էլ նրա ձորահովտի ոչ մի արդյունքը իշխան Շահամիր Սուլթանումից ու նրա ժառանգներից:

Եվ եթե նրանց մեջ գտնվի մահապարտ մեղավոր մեկը և կամ ոսկու կամ արծաթի և այլի պարտապան ոմն, ով էլ լինի՝ միայն նրա անձը թող պատժվի և պարտապանի այն ինչը, որը կգտնվի այդ ժամանակ, այն վճարվի պարտապաններից, իսկ պարտապանի մահվանից հետո՝ նրա որդիները լոռե ձորահովտին տիրեն անպարտ որևէ մեկին:

Եւ այդպես, նաև ոչ ժառանգները, ոչ էլ ազգականները և տոհմակիցները իրավասու չեն վաճառելու և նվիրելու որևէ մեկին այդ հողից ոչ մի ոտնաչափ, այլ միայն տնօրինելու նրա արդյունքը իրենց կենդանութեան ժամանակ:

Եվ մենք, ի հաստատումն մեր այս խոսքերի, սեփական ձեռքով ստորագրեցինք և մեր թագավորական կնիքով կնքեցինք: Գրվեց այս գիրը մեր փեշքաշ նիվիսիի, մդիվան Սուլթան Թումանովի որդու՝ Շիրոշի, ձեռքով 1797 թվականի նոյեմբերի 20-ին, իսկ վրացական քրոնիկոնի շորս հարյուր ութսուն հինգին:

(ութանկյուն կնիք)

Մ, Նոր փաստաթղթեր, թղթ. 1, վավ. 12:

№ 4

Դեռագի XII թագավորի նամակը Հովհաննես Շահամիրյանին

Պայծառ իշխան Յոհաննէս Աղայ ի մէն, պատուով յիշի

Լուր օրհասի պայծառ հօրն ձերոյ և մեր հաւատարիմ բարեկամի բաղ-խեաց զունկս մեր և մեք, ըստ բարեկամական օրինի, ցաւելով ափսոսեցաք զնա, տալով զարժանատուն զողորմին, հայցելով ի տեսնէ վասն հոգւոյ նորին զհանգիստ յաւիտենից և սակս մնացորդացդ և սիրելեացդ մերոց զմխի-

թարուծին և զսփոփանս, առ որ ունիմք ասել, թէպէտ ըստ աշխարհի վարեցման փոխումն նորին պակասութիւն մեծ և տրտմութիւն գերազանց իմն է ձեզ՝ զաւակացդ և ընտանեացդ և մեզ բարեկամացս նորին, սակայն ըստ քրիստոնէականի յուսոյ և կրօնից մերոյ ոչ այլ ինչ, թէ ոչ ի պանդխտական վայրիս յայսմանէ առ բնիկ հայրենիսն մեր փոխել: Ուստի պարտիմք զծանրութիւն, որ ըստ աշխարհի, քրիստոնէաբար թեթևութեամբ տանել ըստ յուսոյ հանդերձեալ կեանքն: Լսելով բարձրաբարձառ ձայնի սրբազան առաքելոյն, թէ ոչ է պարտ քրիստոնէից սուգ առնուլ ի վերայ մեռելոց, այլ լացցին հրէայքն. և կոծեսցին թերահաւատք յն, զի նոքա են արժանի կոծոց և տղբոց, որովհետեւ վասն միտն յաւիտեան տանջանքն է պատրաստեալ, և միւսն շունի երբէք զյոյս յարութեան վերստին նորոգման: Իսկ մեք՝ քրիստոնէայքս, յուսով ակնկալեալ կենաց անվախճանից, համբերաբար ըստ Հօրայ օրհնեալ: Արդ և դուք, սիրելիդ մեր, այժմ զգօրութիւն հոգւոյդ արիացուցանելով հարկ է քիչ հարազատ որդիաբար զնմանութիւն հօր քո բերել ի քեզ: Բարեձևութեամբ քաղաքավարութիւնդ և կարգաւոր կառավարութիւն տան ձերոյ և համայն գործոց. ձերոց, զի լսելով մեր զբարի համբաւ ձեր, ուրախ լիցուք ի ձեզ բարեկամական սրտիւ, վասն զի յայժմառ ոչ լինի ի հաշիւս մեռելոց արկեալ: պայծառ հայրն ձեր և սիրելին մեր, որովհետեւ զհամատիպն դորդի որ ունեւոց է ի յաշխարհի: Սակս որոյ, լսելով ձեր զմիտս զայս բարեկամական գրուած և ընտրութիւն իբր զբարին ի յաման զգօն մտաց ձերոց վեր ընդունելով սրտիւ նատրեսչիք ի պայծառութիւն անուան ձերոյ և ի ցնծութիւն սրտի բարեկամաց ձերոց:

Զխնդիրն լուսահոգի հօր ձերոյ, որ յաղագս Լօռոյ գաւառին, յօժարութեամբ կատարեալ երանելի հօր մերոյ արքային և հանդերձ տեղոյս նոյն ժամենական եղելութիւն զգրուածնի ձեռն հինգ հարիւրապետն Ռաֆայէլ պատանեկին զկնի փոխիլոյն հօր մերոյ առաքեալ եմք առ ձեզ և յուսմք ցարդ բաժանեալ իցէ ձեզ և զայն ամենայն ծանուցեալ իցէք⁵:

Իսկ այժմենական եղելութիւնքն շնորհօքն աստուծոյ ներկայապէս կամք. անդորր և խաղաղութեամբ մեք և երկիր մեր, անկասկած ի թշնամեաց և ի շրրջակայն դրացեաց մերոց եղեալ պարսիկք իշխանաց թէ քիչ Դեանշայու և Ծրեանու և թէ յայլոց, յորոց բաց ի բարեկամութենէ և յընծայաբերութենէ ոչ ինչ ցուցանի մեզ: Նոյնպէս և ի մեծութենէ նորին ինքնակալութենէ Պաւ Պետրովիչ կայսերէն ամենայն ոռոսաց ունիմք աւելի քան զմօրն իւրոյ զշնորհ և զողորմութիւն, զոր տալով մեզ զգօրս վեց պատալիօնս մշտակայս իւրովք ռուճկօք և ամենայն հարկաւոր պարագայիւքն զօրաց, և յատկապէս մեղ թագ, գաւազմալիս և կրկնոց արքայական և զերկիրս մեր թուելով տերութիւն իւրոյ կայսերական մեծութեան, որպէս զՄոսկօֆն և զՊետրսբուրգն, որոց այսց ամենից շնորհաց և պարգեւաց ընկալնումն: Յուսամ չև ևս տեեսցէ քսան օր ժամանակ, ըստ բարձր հրամանի նորին մեծութեան և ըստ գրեցման մինիստրին⁶ մերոյ: Ուրեմն եթէ ըստ շաւղին հօր ձերոյ հայրենասէր կամս ունիցիք, արժանի է ասել՝ աչք ձեր ի լոյս եղիցին և սիրտք ձեր՝ ի ցնծութիւն:

Ի սահմանի մերում եղեալ զբոլոր ազգն և զժողովուրդն հայոց առանց խտրութեան ազդէ մերմէ (այսինքն ի վրաց) ունիմք ընկալեալ ի ծառայ գթութեան և պահպանութեան մերոյ ըստ իւրաքանչիւր արժանեացն իւրեանց և զայնս, որք տարագրեալքն են ի հօտէս մերմէ և ցրուեալք ի զանազան գաւառս՝ նժդեհ կենօք կեանք ընդ տերութեան այլազգաց մեծաջան աշխատութիւն, զայնս ևս ածել կամիմ առ մեզ⁷, զի ընդ եղբարս իւրեանց՝ բնակեցցին ի սեպուհ աշխարհս իւրեանց ի վայելել զսէր և զգթութիւն մեր, և յատկապէզ զձեզ իսկական հաւատարիմ բարեկամսդ մեր ցանկամբ ունիլ ի պատիւ, ի սէր և յաստիճան նախագահութեան ի մէջ նախարարաց մերոց, որք ընդ մեզ են:

Զձերդ բարեկեցութեան և զտեղւոյդ համբաւն անպակաս գրեսչիք մեզ, զի ախորժելիք են մեզ և եթէ զխնդիր իմն ևս ունիցիք՝ չեն անտես առնելիք ի մէնջ, այլ իբրև հարազատի և հաւատարիմ բարեկամի յօժարութեամբ կատարելոց եմք: Եւ՛ զայլ մանրամասնաբար որպիսութիւնք տեղւոյս և մեր ի մերմէ

հաւատարիմ գրագիր և թարգման Տէր Դաւիթ Աւագ քահանայի գրուածոցն
անդեկանալոց էք:

Մնամք միշտ առ հաւատարիմ բարեկամսդ մեր
ի սրտէ բարեբար Արքայ վրաց կախից և ալոց:
1799 ի հոկտ[եմ]բերի 23
ի մայրաքաղաքս Թիֆլիզ:— Էկոնադրեալ Գփօրկին

Սովաւ հաստատեմք զվերոյգրեալ պատճենն գրոց լինել հաւաստի պատ—
ճեն նախատիպ գրոյն, նոյն այս օր ղգուշեղաբար բաղդատեցաւ ընդ նախա—
գաղափարին, եղև ի Մատրաս ի Յարեւելեան հնդիկս այս եօթներորդ օր նոյնմ—
բերի, յամի տեառն մի հազար ութ հարիւր և մետասան:

Կնիազ Աղաբէգ Մելիք Բէգլարեան
Յարութիւն Թարխանի Խօշ[ա]Մինասեանց

In sestimonium veritatis
Notary public
Madras

ՄՄ. Ալ. Երիցյանի արխիվ, Թղթ. 156, վավ. 232, 1799 թ., 2 թերթ:

№ 5

Յովհաննէս Շահամիրյանի և Նազար Յակոբջան Շահամիրյանի նամակը՝
Վրաստանի կառավարչին

Առ ճարին գերագնացութիւն ընդհանուր կառավարիչ Վրաստանի և այլն և այլն

Հաճոյ թուեսցի ձերումդ գերազանցութեան

Հայցեմք խոնարհաբար ներել մեզ առաջի լինիլ ձերումդ գերազանցութեան,
զի մեք անագան ուրեմն տեղեկացեալքս կայսերական հրատարակութեան ի
ձեռն կառավարչին Վրաստանի յաղագս քաղաքին Լոռոյ, որ ի վիճակին վրաց,
յորումն յայտ առնէ, զի եթէ ոք յետեալ գտանիցի յանդիման առնել զանձն
ի պահանջումն իշխեալ քաղաքին ի կրկին հնգեակս ամաց, սկսեալ յօրէ անտի:
իշխանութեան ձերոյ ի Վրաստան, այնուհետև քաղաքն այն գրաւեսցի յարքու—
նուստ յանուն օգոստափառ կայսեր Ռուսիոյ և այլն և այլն և այլն:

Վասնորոյ և մեծի խոնարհաբար հայցեմք լսել աղաչանաց մերոց, ղորս
ւարդել համարձակեսցուք առաջի ձերումդ գերազանցութեան, զի քաղաքն այն
պատկանի իսկապես հանգուցեալ վերջնոյ իշխանին Շամիր Սուլթան կոչեցե—
լոյ և անտի հասանէ առ մեզ՝ առ որդիս իւր և որդւոց յորդիս զայրական սեռին
յաջորդութեան ի կարգին ունելով տեկոց է մինչև ցկատարած աշխարհի: Այս—
պէս ուրեմն հաստատեալ և կարգեալ ի պարգևի մասին արքայական շնորհին,
որ ի ձեռն իշխանին վրաց հրամանաւ հօր իւրոյ վեհափառ թագաւորին Վրաս—
տանի Հերակլ Երկրորդի և վերջնոյ և այլն և այլն:

Զայսմանէ ունիմք առ մեզ գործս և վկայականս ղիրաւանց քաղաքին ի մերս
սեպհականութեան: Եւ օրինակք գրութեանցն այնոցիկ՝ գտանիցին անշուշտ և
այժմ իսկ ի դիւանին կառավարութեան Վրաստանի: Վասնորոյ յոյժ յարգանք
խնդրեմք ի գերազանցութեան ձերմէ յուշի ունելով զաղերս մեր հաճեսցիք ըն—
ձեռն առ մեզ զյատուկ պաշտպանութիւն ձեր սակս իշխեալ քաղաքին Լոռոյ:

Ազգն մեր ի սկզբանէ անտի վաճառականական պայմանադրութեամբ ընդ
տէրութեան պայծառափայլ ազգին ձերոյ քաջապէս զփորձ առեալ զօրինաւորն
ապահովութեան իրաւանց իւրոց և այժմ ևս զայն պատեհ առիթ ի ձեռն ունելով
կրկնէ զշնորհակալիս իւր ձերումդ գերազանցութեան և խնդրէ միանգամայն:

դարձեալ նոյն գթալիր պաշտպանութիւն ընձեռել առ նա սակս քաղաքին այնորիկ: Նա զի և պարգևեալ ազատութիւն իւրոց գործակատարաց, որք մարթասցեն այստէնտե երևել շքեղ բնակարանս ձեր և ունել շնորհս առաջի ձերումդ գերազանցութեան, որով հեշտեալ կարասցեն հասանիլ վերստին շնորհաց ձերումդ գերազանցութեան:

Եւ ևս խնդրեմք, զի ներեսցիք մեզ և ի մասնաւորի ուղղեալ ձերումդ գերազանցութեան և դայս միւս ևս խնդիր, զի հրաման տալիք այժմէն երթալ և հաստատել զաղխս մեր և զկարասիս (եթէ տէր կամիցի) ի քաղաքին Լոռուոյ ընտանեօք և որդովք մերովք, լինելով քաղաքն այն մասամբ իմիք մեր երկիր մայրենի յաշխարհին Հայաստանի, որ այժմ գտանի ընդ բարեխնամ կառավարութեան ձերումդ գերազանցութեան: Յայտնելով զվստահութիւն հաճութեան մերոց, յամենայն ժամու պատրաստ] եմք ցուցանել ձերումդ գերազանցութեան գոհրոյն մերոյ և դպատկառանաց զարգասիս, որ եմք ձերումդ գերազանցութեան ամենախոնարհ ժառաջ

Մատրաս

Յունիս, 30 1806

1 Յովհաննէս Շամիր որդի ճանգ.

Շամիր Սուլթան իշխանի

2 Նազար Յակոբեան Շամիր թոռն հան:

Շամիր Սուլթան իշխանի

Վկայեմ զվերոյգրեալ ստորագրութեանց Յովհաննէս Շամիր իշխանին և Նազար Յակոբեան Շամիր իշխանի, որք ստորագրեցին ի ներկայութեան իմոյ և են երկոքեան սոքա տեր իրաւանց իւրեանց:

ի վկայութիւն ճշմարտութեանս

Բօպէք Երմի

հասարակաց նօտարիոս

Մատրաս

|| 1829 հոկտ. 30. Յովսէփ Յովհաննէս Ամիր-խան մեծ կալուածատէր ի Ջաւայկղզին Հնդկաստանի խնդրեաց ի նիկողայոս կայսերէն ոռւսաց ստանալ յինքնէ զ500000 ֆրանքնոց եկամուտս ի տարին և փոխանակ այնր տալ ինքեան ի սեպհականութիւն զԱրարատեան նահանգն, ուր գտանին Երևան և Նախիջևան, այն է միայն Արարատեան դաշտն սկսեալ ի Կողբայ ցԳողթն վասն հաստատելոյ անդ զհայկական իշխանութիւն ընդ պաշտպանութեամբ ոռւսաց և դաշնակից նորին, բայց կայսրն ոչ հաճեցաւ ընդ այն առաջարկ՝ պատճառելով, թէ արդեն ի 1827 ամէ զայն նահանգ համարուեալ է ընդ նահանգս Ռուսաստանի և զինքն անուանեալ է «Արքայ Հայաստանի»:

ՄՄ, կաթողիկոսական դիվան, թղթ. 17, վավ. 68, թարգմանության սեպհովիտուն, 3 էջ:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Կարապետ Գառպարյան կամ Կարապետ Գառպարի Խաղակյան վաճառականի մասին, որը XVIII դարի վերջին երկու տասնամյակներին էջմիածնի կաթողիկոսարանի ու հատկապես վրաց արքունիքի կապը հնդկահայ գաղթօջախի հետ իրագործողներից մեկն էր, տե՛ս Վ. Մ ա ր տ ի-ր ո ս յ ա ն. Հայերի առևտրական գործունեությունը Քարթլ-Կախեթի թագավորությունում (XVIII դ. նրկորդ կես).—ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.» 1974, № 11, էջ 66: Պ. Զ ո բ ա ն յ ա ն. Վրացական ուղեգրությունները և նրանց տեղեկությունները հայերի մասին. Երևան, 1981, էջ 87, ծան. 28:

2 Սուլթան դիվան Թումանյանը (Թումանով, Թումանիշվիլի), որ Պ. Ս. Պոտյոմկինի մոտ ժողել էր դեռևս 1783 թ. Գեորգիական դաշնագրի կնքման ժամանակ, կրկին որպես Հերակլ II-ի

դիվանագիտական պատվիրակ Ռուսաստան էր մեկնել 1786 թ. Պոտյոմկինին Ախալցխայի փաշայի սեպարատ համաձայնագրի առաջարկություններն ու Վրաստանի շահերը ներկայացնելու նպատակով։ Սուլխան Թումանյանը լավ տպավորություն էր թողել Գ. Ա. Պոտյոմկինի վրա և վերջինս նկատերինա 11-ին ուղղված 1783 թ. հոկտեմբերի 7-ի նամակում նրա մասին արտահայտվում էր որպես լուսավորյալ ու բազում շնորհներով օժտված անձնավորության։ Ուշագրավ է, որ Սուլխան Թումանյանի պատվերով է, որ Գալուս արքիմանդրիտը վրացերենի է թարգմանել Շ. Շահամիրյանի ընդհանուր տետրակը։ Ղուկաս կաթողիկոսը իր 1792 թ. օգոստոսի 16-ի Շ. Շահամիրյանին ուղղված նամակում գրում է. «Վասն առ Սուլխան դիւանն դրեալ թղթոյդ խնդրեալ ի՛ր յուզարկել ի Թիֆլիս և զպատասխանին յուզարկել, Սուլխան դիւանն ի վաղուց առաքեցեալ զուղով յերկիրն Ռուսաց, զՍուլթն քո յուզարկեցաք ի Թիֆլիս առ եղբայրն նորա Մանուշար դիւանն՝ հասուցանել առ եղբայրն և նա թուղթ դրեալ առ մեզ՝ զպատասխանին թղթոյ քո եղեալ էր ի մէջ նորա և խնդրեալ էր ի մէջ հասուցանել առ պ. Կարապետն...» (Գիւան հայոց պատմութեան. Կ. Ք., Թիֆլիս, 1911, էջ 140)։

Սուլխան Թումանյանի Ռուսաստան այցելության առթիվ Հ. Արզումանը Մինաս Լազարյանին գրած իր նամակում խնդրում է օժանդակել նրան, բացատրելով, թե ընդհանուր գործոց յաջողությունն մեզ է պարծանք, րոտ որում մեր ազգ է» (ՄՄ, ձեռ. № 4496, թ. 176)։

3 Գեորգի արքայազն, Հերակլ 11-ի գահաժառանգը, հետագայում՝ Գեորգի XII, Վրաստանի թագավոր 1798—1800 թթ.։

4 Տեր Դավիթ ավագ քահանա Տեր Օհանյան, վրաց արքունիքի թարգմանիչ և գրագիր։

5 Այս պարբերությունից երևում է, որ Լոռու գավառի մասին Շահամիրյանի խնդրանքով Հերակլ 11-ի՝ իր մահվանից քիչ առաջ կատարած կարգադրությունը, որ, ենթադրելի է, հենց ստորև հրատարակվող 1797 թ. նոյ. 20-ի հրովարտակն է (Հերակլը մահացել է 1798 թ. հունվարին), ուղարկվել է Հերակլի մահվանից հետո Գեորգի՝ թագավորի կողմից հայազգի Ռաֆայել Դանիելսոնին (Գինիբեկյանց) միջոցով, Վանդերե տեղւոյ նոյն ժամանական եկեղեցիին զորուածնա՝ այսինքն՝ այդ ընթացքում այստեղ (իմա՝ Վրաստանում) կատարված իրադարձությունների մասին հաղորդումներով։

6 Վրաստանի ներկայացուցիչը (ամբիստորը) Ռուսաստանում իշխան Գարսևան Ճավճավաձեն էր, որ նշանակվել էր ըստ 1783 թ. Գեորգիայան դաշնագրի՝ նրա գործունեության մասին տե՛ս Գ. Արզումանյան, Ջափնիզաձե՝ ինքնաշարժը մոլորված, տե՛ս. 1982.

7 Հայ ազատագրական շարժման համար կարևորագույն պայման էր դիտվում պատմական իր տարածքի վրա հայ ժողովրդի գերակշիռ գոյության փաստը և աշխարհացրիվ հայ զանգվածները Հայաստան վերադարձնելու գործը։ Այդ նպատակի իրականացման ուղին Մաղրասի խրամակի անդամները տեսնում էին հայ ժողովրդի ցրված զանգվածներին վրաց թագավորության սահմանների մեջ եղած հայկական գավառներում հավաքելու մեջ, ելնելով այն հանգամանքից, որ հայ և վրաց ժողովուրդների պատմական ճակատագրերն ու շահերը զգալիորեն համընկնում էին և, ըստ այդմ էլ, Վրաստանը շահագրգռված պիտի լիներ նման քայլի դիմելու։ Հերակլ 11-ի խնդրանքով մի շարք ծրագրային խորհուրդներ շարադրելուց հետո, Շ. Շահամիրյանը 1787 թ. հոկտեմբերի 15-ին նրան գրած իր նամակում առաջարկում էր «օրինակ նամակի պահպանության», որը Հերակլը պիտի շնորհեր հայ ժողովրդին։ Շ. Շահամիրյանի այդ առաջարկը լիովին պաշտպանություն է գտնում Հերակլ 11-ի կողմից և վերջինս, անշա՛ն սրբազրույթներով Շահամիրյանի կազմած ուղերձի տեքստը վավերացնելով (1790 թ. դեկտեմբերի 4), առաքում է Հնդկաստան 1791 թ. սկզբներին։ Այն, դատելով վրացերենով պահպանված օրինակի վրա եղած մակագրությունից, տպագրվել է 1792 թ. Հարություն Շավոնյանի տպարանում 1000 օրինակի Ուշագրավ է այստեղ այն, որ 1799 թ. ևս Գեորգի XII-ը հայտնում է Շահամիրյանի առաջարկած քաղաքականությունը շարունակելու իր պատրաստակամությունը, որպեսզի տարագրյալ հայությունը, այդ թվում և Շահամիրյանի ժառանգները, վերադառնալով ընդ եղբարս իւրեանց՝ րնակեսցին ի սեպուս՝ աշխարհս իւրեանցս։

ИЗ ИСТОРИИ АРМЯНСКОЙ КОЛОНИИ ИНДИИ
(Нововыявленные документы)

П. А. ЧОБАНЯН

Резюме

В деле освобождения Армении от чужеземного ига во второй половине XVIII века армянские общественные деятели большое место отводили содействию Грузии, всячески способствуя также ее политическому и экономическому усилению. Особенно тесными были отношения между представителями индийской армянской колонии и грузинского царского двора. По указу Ираклия II Шаамиру Шаампряну был присвоен титул грузинского князя и отведена в потомственное пользование провинция Лори. Публикуются нововыявленные документальные материалы о переговорах по вопросу переезда Шаампряна и его потомков в свои владения, в частности, оригиналы двух писем Шаампряна от 19 января 1793 г. и от 30 ноября 1795 г., отправленные Манучару Туманяну (Туманшвили). Если в первом письме автор надеется на помощь Манучара, то во втором упрекает его и других за «холодное» отношение к его делам. Публикуется также фотокопия оригинала и сделанный нами армянский перевод указа царя Ираклия II от 20 ноября 1797 г., где определяются права и обязанности Шаамиряна и его потомков в случае переселения их в провинцию Лори. Кстати, оригинал этого указа недавно приобретен в Лондоне арменоведом В. Нерсисяном и подарен Матенадарану им. Месропа Маштоца. Следующий документ—нотариально заверенная в Мадрасе копия письма Георгия XII сыну Шаамира Шаампряна—Ованесу Шаампряну от 23 октября 1799 г., в котором царь, сообщив об оживлении русско-грузинских отношений, просит его следовать патристическим устремлениям отца и ускорить свой переезд в провинцию Лори. В письме главноуправляющему Грузии от 30 июня 1806 г. Ованес и Назар—сын и внук Шаампряна, просят разрешения переехать в Лори.